ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«05» 05 2016թ.

հեռ. (0255) 6– 18 - 97
mail: metsparni.lori@mta.gov. am

թիվ ՄՊ-49

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊՐ-Ն Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան.

Հայտնում եմ Ձեզ, որ 21.04.2016թ. ՄՊ 43 գրությամբ Ձեզ եմ ուղարկել Մեծ Պարնի համայնքի ավագանու թիվ 13-15 որոշումները սակայն, տեխնիկական պատճառներով վերը նշված գրությունը Ձեզ չի հասել, ուստի նորից կից Ձեզ եմ ներկայացնում Մեծ Պարնի համայնքի ավագանու 2016թվականի թիվ 13-15 որոշումները:

Առդիր 4 թերթ

Համայնքի ղեկավար՝ ---------- Գ. Պալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ № 13-Ն

«14» 04 2016թ.

հեռ. (0255) 6– 18 - 97
E-mail: metsparni.lori@mta.gov. ru

Մեծ Պարնի համայնքի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի «Մեծ Պարնի համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 33-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով :

Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշում է

1. Մեծ Պարնի համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 22-ի «Մեծ Պարնի համայնքի 2016թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 33-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ համաձայն կից թիվ 1-ից թիվ 6 հատվածների :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ տասներերդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Արզումանյան Արամայիս			
Ավալյան Վազգեն			
Ձոթյան Անդրանիկ			
Պապյան Հովիկ			
Գաբրիելյան Հովիկ			
Գասոյան Կարեն			
Առաքելյան Գևորգ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝----------Գ. Պապյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Մեծ Պարնի ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, հասցե գ. Մեծ Պարնի
հեռախոս (0255) 61888

ՈՐՈՇՈՒՄ

«14» ապրիլ 2016 թվականի N 14-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 30-րդ հոդվածներով, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, **«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի 2-րդ հոդվածի**

Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Մեծ Պարնի համայնքի ավագանու՝ Լոռու մարզի Մեծ Պարնիի գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին 2013թ. հուլիսի 3-ի թիվ 11-Ա որոշումը

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Արզումանյան Արամայիս			
Ավալյան Վազգեն			
Զոթյան Անդրանիկ			
Պապյան Հովիկ			
Գաբրիելյան Հովիկ			
Գասոյան Կարեն			
Առաքելյան Գևորգ			

Համայնքի ղեկավար _____ Գ. Պալյան

14 ապրիլ 2016 թ.
գ. Մեծ Պարնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ԱՎԱԳԱՆԻ

հեռ. (0255) 6– 18 - 97
E-mail: metsparni.lori@mta.gov. am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 15

« 14 » _____04_____ 2016թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Մեծ Պարնի համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 27-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Արզումանյան Արամայիս			
Ավալյան Վազգեն			
Ջոթյան Անդրանիկ			
Պապյան Հովիկ			
Գաբրիելյան Հովիկ			
Գասոյան Կարեն			
Առաքելյան Գևորգ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնքի ավագանու
2016 թվականի ապրիլի 14-ի N 15 որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Սերինե Պապանյանին տալ ուսման վարձ -50000 (հիսուն հազար) դրամ
2. Արմեն Մկոյանին տալ ուսման վարձ -50000 (հիսուն հազար) դրամ
3. Արփինե Քոսյանին տալ ուսման վարձ-20000(քսան հազար) դրամ
4. Նաիրա Ղազարյանին տալ ուսման վարձ -50000 (հիսուն հազար) դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 170000 (մեկ հարյուր յոթանասուն հազար) դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Գ. Պալյան